ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/9 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով տեխնիկական հսկողության ծառայությունների (ՀՀ Արագածոտնի մարզի Փարպի համայնքի 5-րդ դարի Ծիրանավոր եկեղեցի, ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատ համայնքի Թարգմանչաց եկեղեցի, ՀՀ Արմավիրի մարզ, Ապագա գյուղի Սարգիս Մուրադյանի «Սասունցիներ» որմնանկար, ՀՀ Վայոց Ձորի մարզի Շատիվանքի Սբ. Սիոն եկեղեցի) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 17.02.2026թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատող հանձնաժողովի կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հրանտ Հովսեփյան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝	Լուսինե Իգիթյան /գնահատող/
	Սուրեն Շաքարյան /գնահատող/
	Արմինե Ստեփանյան /բացող/
	Վերգինե Սահակյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝	Արմինե Սահակյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/9 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԾՁԲ-26/9 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Էլ. Հասցեները
1	«Ռիջիդ» ՍՊԸ	rigidalgroup@gmail.com
2	«Գրիտիգ» ՍՊԸ	gritig@inbox.ru
3	«Էս Ռիբիլդ» ՍՊԸ	sahakyanedgar@mail.ru

3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4. Մասնակիցների առաջարկած գինը.

4.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկը.

Չափաբաժին	Գնման գինը ՀՀ դրամ	Մասնակիցների անվանումը					
		«Ռիջիդ» ՍՊԸ		«Գրիտիգ» ՍՊԸ		«Էս Ռիբիլդ» ՍՊԸ	
		Առաջարկված գինը, ՀՀ դրամ					
		Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Ներառյալ ԱԱՀ
1	**133000**	**120000**	**120000**	130000	130000	-	-
2	**237130**	**190000**	**190000**	237000	237000	-	-
3	**167683**	-	-	-	-	-	-
4	**484908**	398000	398000	484000	484000	**380000**	**456000**

5. Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին.

5.1 Մասնակիցների հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման նպատակով հանձնաժողովի նիստը կասեցնել և շարունակել հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, 2026թ փետրվարի 24-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 24.02.2026թ. ժամը 11:00-ին

6. Տվյալներ մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 **«Ռիջիդ» ՍՊԸ**-ի կողմից 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, սակայն ներկայացվածները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված N 1՝ Դիմում-հայտարարությանը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.2 **«Էս Ռիբիլդ» ՍՊԸ**-ի կողմից 4-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, իսկ ներկայացվածները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- «Մասնագիտական փորձառությունը» գնահատելու համար ներկայացված չէ նախկինում կատարված պայմանագիրը և պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթղթերը:
- բացակայում է Հավելված 1.1-ը, կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկատվությունը և տեղեկատվությունը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.3 **«Գրիտիգ» ՍՊԸ**–ի կողմից 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, իսկ ներկայացվածները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Հավելված 1՝ դիմում հայտարարությունը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին՝ ներկայացված է բաց մրցույթի մասնակցության դիմում:
- «Մասնագիտական փորձառությունը» գնահատելու համար ներկայացրած նախկինում կատարված պայմանագիրը չի կարող գնահատվել պատշաճ կատարված, քանի որ, ըստ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ծառայությունը մատուցվել է պայմանագրի ժամկետի խախտմամբ:
- բացակայում է Հավելված 1.1-ը, կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկատվությունը և տեղեկատվությունը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7. Գնահատման գործընթացի կասեցման մասին.

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 6.1-ից 6.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել մասնակիցների կողմից շտկված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 2026թ. փետրվարի 27-ին, ժամը 11:00-ին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 3-րդ հարկ, 313 սենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 27.02.2026թ. ժամը 11:00-ին

8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.

8.1 **«Էս Ռիբիլդ» ՍՊԸ-ն, «Ռիջիդ» ՍՊԸ-ն և «Գրիտիգ» ՍՊԸ-ն** սահմանված ժամկետում շտկել են հանձնաժողովի կողմից 6.1-ից 6.3 կետերով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Տվյալներ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակցի վերաբերյալ.

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից.

1-ին չափաբաժնի մասով՝
1-ին տեղ զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Ռիջիդ» ՍՊԸ-ին**,
2-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել **«Գրիտիգ» ՍՊԸ–ին,**
2-րդ չափաբաժնի մասով՝
1-ին տեղ զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Ռիջիդ» ՍՊԸ–ին,**
2-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել **«Գրիտիգ» ՍՊԸ–ին,**
4-րդ չափաբաժնի մասով՝
1-ին տեղ զբաղեցրած՝ **ընտրված** մասնակից ճանաչել **«Էս Ռիբիլդ» ՍՊԸ–ին,**
2-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել **«Ռիջիդ» ՍՊԸ–ին,**

3-րդ տեղ զաղեցրած մասնակից ճանաչել **«Գրիտիգ» ՍՊԸ-ին:**

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10. Գնահատման արդյունքների մասին.

10.1 Հաստատել 1-ին, 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը, ըստ որի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին էլեկտրոնային ձևով ՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

10.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, գնման գործընթացը **3-րդ** չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ ոչ մի հայտ չի ներկայացվել հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Հովսեփյան /նախագահ/

_____ Լուսինե Իգիթյան

_____ Սուրեն Շաքարյան

_____ Արմինե Ստեփանյան

_____ Վերգինե Սահակյան

_____ Արմինե Սահակյան /քարտուղար/